ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2022 թվականի N 2022-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 954-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N 954-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման նախաբանում «20-րդ հոդվածը՝» բառերը փոխարինել «6-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը՝» բառերով.

2) որոշման N 1 հավելվածի 21-րդ կետը «ԱՆԻ ՊԱՍ-ի» բառերից հետո լրացնել «սերվերի» բառով, իսկ «(այսուհետ՝ ՍԱՏՄ)» բառերից հետո՝ «, իսկ էլեկտրոնային

տեղեկատվական համակարգի տեխնիկատեղեկատվական սպասարկումը՝ ՊՈԱԿ-ի կողմից» բառերով.

3) որոշման N 1 հավելվածի 35-րդ կետում «ոլորտային հասարակական» բառերը փոխարինել «հասարակական» բառով.

4) որոշման N 1 հավելվածի 36-րդ կետի 5-րդ ենթակետը «ծրագրային» բառից հետո լրացնել «և էլեկտրոնային տեղեկատվական համակարգի տեխնի-կատեղեկատվական» բառերով.

5) որոշման N 2 հավելվածի 5-րդ կետը «սպասարկում» բառից առաջ լրացնել «սերվերի» բառով.

6) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«

6.	ԱՆԻ ՊԱՍ-ի էլեկտրոնային տեղեկատվական համակարգի տեխնիկատեղե-կատվական սպասարկում	ՊՈԱԿ (համաձայնությամբ)	շարունակական	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ